

## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

**Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության  
Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության՝ հարյուր տոկոս պետությանը  
սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական  
ընկերությունների գործադիր մարմինների հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու  
համար**

1. << Ջերմուկի առողջության կենտրոն >> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն
2. << Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն >> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն
3. << Զատիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն >> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

1-ին կետում նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- 1) բարձրագույն բժշկական կրթություն, առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի 3 տարվա ստաժ
- 2) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր)
- 3) կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝  
ա/ ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման, անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման  
աշխատանքների բաշխման, կարգապահական պատասխանատվության, խարիսուսանքի միջոցների կիրառման, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
- 4) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ գույքի, ֆինանսական միջոցների տնօրինման և գործարքներ կնքելու կարողություններ
- 5) բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում  
Լրացուցիչ պայմաններն են՝
  - 1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
  - 2) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն
  - 3) Օտար լեզվի բավարար իմացություն
  - 4) Առողջապահության կազմակերպչի որակավորում

2-3 կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- 1) բարձրագույն բժշկական կրթություն և հետբուհական կրթություն ներքին հիվանդություններ /թերապիա/, կամ մանկաբուժություն կամ ընտանեական

բժշկություն մասնագիտությամբ, առնվազն 3 տարվա մասնագիտական ստաժ կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի 2 տարվա ստաժ

2) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր)

3) կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝

ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման, անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման

աշխատանքների բաշխման, կարգապահական պատասխանատվության, խարխուսանքի միջոցների կիրառման.

4) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

5) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝ գույքի, ֆինանսական միջոցների տնօրինման և գործարքներ կնքելու կարողություններ

6) բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում

Լրացուցիչ պայմաններն են՝

7) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

8) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն

3) Օտար լեզվի բավարար իմացություն

### **Մրցույթը կանցկացվի՝ 2014 թվականի հոկտեմբերի 3-ին**

**<<Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն- ժ. 10<sup>00</sup>-ին**

**<<Ջերմուկի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն - ժ. 12<sup>00</sup>-ին**

**<<Զատիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն -ժ 14.00-ին**

**Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները ՀՀ Վայոց ձորի մարզպետարան են ներկայացնում՝**

1) դիմում.

2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.

3) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ զիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

7) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել)։

8) կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ), որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

9) քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

**Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9<sup>00</sup>-12<sup>00</sup>, բացի շաբաթ և կիրակի օրերից:**

***Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2014թվականի սեպտեմբերի 1-ը***

***Մրցույթը կկայանա ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի շենքում /ՀՀ Վայոց ձորի մարզ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5/:***

***Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ, անձնակազմի կառավարման բաժին :***

***Հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 ,***

***Հեռ./+374281/ 2-55-95:***